

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. հունվարի 18-ի
նիստի /արձանագրություն N 7/

1. Հանձնարարել Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ղեկան Ա. Երզինկյանին զբաղվել Վարշավայի Միցկևիչի անվան ինստիտուտի հետ համագործակցության և ինստիտուտում անիմացիայի գծով վարպետաց դասերի կազմակերպման աշխատանքների համակարգմամբ;
2. Հանձնարարել պրոռեկտորներ Ն. Սարգսյանին, Հ. Ավագյանին, Վ. Եղիազարյանին և գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին կատարել նախահաշվարկ և ներկայացնել առաջարկ ինստիտուտում ուսումնառությունը չավարտած նախկին ուսանողներին ամբիոններին կցելու և ամփոփիչ ատեստացիոն քննաշրջանին մասնակցելու համար գանձվող գումարի չափի վերաբերյալ:
Հարցի վերջնական լուծումը քննարկել գիտական խորհրդի նիստում:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Եղիազարյանին կազմակերպել և վերահսկել ինստիտուտի արխիվային փաստաթղթերը ՀՀ ազգային արխիվ հանձնելու գործընթացը:
4. Հանձնարարել ինստիտուտի միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնին միջբուհական համագործակցության վերաբերյալ ստացած ծրագրերի կրկնօրինակները տրամադրել ղեկաններին՝ ամբիոններին և ուսանողներին տեղեկացնելու համար:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան